66. ԱՄՈՒԼ ՄԱՐԴ

Մարթըմ կիլնը, կըսը. - Կակո՛, ըզձը փսա՛կը:

Կըսի. - Գյընա՛, կա՛ն էրի, քյը խամար ախչիկըմ կընդը՛, ա՛ռ, էրի՛:

Էն էլ կիլնը, կէրթա, ախչիկ շատ կը գիվան, էն էլ կէրթա, ախչիկ կը տեսնա:

Կըսը. - Անու նշան ի՞նչ կը:

Կըսը. - Վիվ գիւլաշչի՛մ կա, անու մեչկ տա գյետին, իմ ախչիկ կը տամ անու:

Էն էլ կիլնը մեյդանի մեչ, կը տեսնա՝ գիւլաշչին էրի: Զարզանդ զան մարթ կը պըռնը:

Էն էլ կըսը. - Իս իմ տընից իլիր իմ, իկիր իմ, թը զէն թալիր իմ գյետին, չըմ թալիր:

Կը խասնը, կըսը. «Աստըվա՛ծ, տիւ ըզձը ամիթով չանիս»:

Չը գյըտը, թը ախչիկն ը: Ախչիկ զան շատ կը տանջը, ծեռ կը խասնը ծըծիր, կիմանա, թը ախչիկ ը, կը զարկը գյետին:

Խոսք կէրթա թակավուրին, թը քիւ ախչիկ զարկին գյետին:

Ախչիկ կըսը. - Աստըծուց իմ խընթրի, քիւ մարտիւթին քիւ վերեն չըգա, չուր քիւ նըվին ընի քիւ խալավքյիր:

Կիլնը, կը գա խոր տուն:

Խոր կըսը. - Ֆըլան թակավուրը ախչիկ ուզիր իմ ձի խամար, գյընա՛, պի՛:

Կիլնին, կէրթան, կը պերեն, կը փսակին: Տարի՛մ կընցնը, անու վերեն մարտիւթին չի գա:

Ախչիկ խոսք կը ճամբխը խոր, կըսը. - Կակո՛, էս մարթ նամեր ը:

Էն էլ կը ճամբխը խնամու վերեն՝ որ քիւ տըղեն մարթ չէր, վըրե՞ զիմ ախչիկ տարավ, ընկնավ անու մեղաց տակ:

Կըսը. - Տըղա՛, տիւ մարթ չէ՞ր, վըրե՞ քանցիր, փսակվար:

Կըսը. - Աղո՛ւրթ ը, իմ ծեռ ճար չըկա, ի՛նչըխ գյըտեքյ, անցկո՛ւն արեքյ:

Թակավուր կը ճամբխը, զախչիկ կը տանը:

Կըսը. - Տըղա՛, էկած՝ քիւ կընիկ կը տանին:

Էսաց. - Պեթկ ա իս տանիմ, խոր տան թանսլիմ անիմ, վուոր հուրիշ մարթ տանը, իս ըզձը տը սպանիմ:

Կիլնը, կառնի ուր կընիկ, կէրթա: Տեսնա՝ յոթ դեվ գիւ մանչ սարին, անու ճամբխի վերա: Թուր կը քյեշը, կէրթա յոթն էլ կը սպանը:

Կընիկ կիլնը, անկանջքյիր կը կըտրը, կը թալը խորջ:

Իրիկ կըսը. - Անկանջքյիր վըրե՞ կը տնիս խորջը:

Կըսը. - Տանիմ իմ խոր տուն, ըսիմ՝ կտրիճ իրիկ մ' ունիմ:

Կըսը. - Աստըված հանկը, տիւ տը թըլիս, չըտանիս քի խոր դիվան: Իս յոթ մուկ իմ սպանիր:

Կիլնը, ըզկընիկ կառնը, կէրթա: Կէրթան խոր տուն:

Թակավուր կըսը. - Նա խորոտ ջըհել ափսուս ը, իմ ծեռ չէրթա վերեն, իս սպանիմ:

Կը տանի, թըլի բախչեն, վուոր վիշափ ուտը: Լաճն էլ կիլնը, թուր կը քյեշը, ըզվիշափ կը փըրտը:

Ռըհաթ կը նըստը էնտեղ: Կէրթան կը տեսնան՝ վիշափ սպանիր, նըստիր:

Թակավուրն էլ կըսը. - Զանն տ'էորիղկիմ ճինմաճինա թակավուրը վերեն կըռիվ, սպանվը, մոտեն ազատվինքյ:

Կիլնը, ձին կը խեծնը, կէրթա: Շա՛տ, քիչ՝ էլ չըմ գյըտը: Կէրթա պանցր սարի՛մ գյըլիխ, կիրիշկը, զանքար կը տեսնա:

Կըսը. - Նա անքար իլնը պանմբակ, իս ըլնիմ կըրակ, չըմ կերի վառը, իս իլնիմ անձրիվ, չըմ կերի թըրճը:

Ձիուն լեզիւ կը գա, կըսը. - Մը՛ վախանա, քանի՛մ տիւ քիւ թըրով սպանիս, իս էրկու անցկուն իմ պոչով, ոտնով տը սպանիմ:

Կիլնը, կըռիվ կանը:

Տնռնանքյ վւսր ախչկան, ախչիկն էլ կիլնին, կը տան մարտիւ:

Դիրիկուն ինչ տը քյընին, կէրթան հօղեն՝ խաց ուտին, էրկու մուկ ւսռիքյ հինը հերար կառնին:

Կըսը. - Կընի՛կ, իլի՛, իմ նետ-անիղ տո՛ւ ըգձը:

Կընիկ կը տա, կը գւսնը, էրկու մուկն էլ կը սպանը, կինին գյետին:

Կընկւսն սեռտ կը խառնը, կիլնը ավիլիւվ ըզմըկնիր կը թւսլը տիւս:

Կըսը. - Ի՞նչ տ՛անիս, կընի՛կ:

Կըսը. - Թւսլիմ տիւս, իմ սեռտ էկավ տակ:

Կըսը. - Իս խըլըսուն տը տանիմ քիւ խոր դիվան:

Կընիկն էլ ուր միտվե կըսը. «Վւս՜յ, էս ի՞նչ փիս մարթ ը, իմ իրիկ էկանք յոթ դեվ սպանից, իմ իրիկ չէթող իս քըսա՛ էներ, յոթ դեվ յոթ մուկ խըսաբից: Ուխտ իլնը, իս քիւ ծուց չըպառկիմ»:

Կըսը. - Կընի՛կ, էրի՛, մըտը՛ քիւ տեղ:

Կըսը. - Տիւ կեղտո՛ւտ, փի՛ս, իս չըմ իգւս: Էրի՛, ըզըյի լիւղկւսցըցիմ:

Կիլնին, եռման ճիւր կը պիրին, զիրիկ կը լիւղկւսցըցը, սապուն կը տւս վւսր գյըլխուն, ճիւր շուռ կըտա վերեն:

Իրիկ կը բիւռա. - Վւս՜խ, իս էրեցա՛:

Կընիկ կը փախը, կիլնը տիւս: Կըսը. «Դւսռւսճի՛ իրիկ, ո՞ր տեղն իս, տը գւսմ, քյի խասնիմ, թւսխ ձը սպանի՛ն»:

Կը գւս, կը տեսնա ինչի ծառը թավիր աշնան կը թւսփին գյետին, ւսնցկիւն ջւսնդւսկտիր փըռիր գյետին: Կը քըշը, կէրթա:

Լաճ կը տեսնա, կըսը. «Վւս՜յ, ի՞նչ իլնը, նւս կարմիր ձիավուր ըգձը տը սպանը: Իս տ՛էրթամ, յա՛ն էն ըգձը սպանը, յան իս՝ զէն, պըռծնինքյ»:

Կիլնը կը գւս, կընիկ զւստնու կը բիւռա, կըսը. - Աստըծու սիրուն իլնը, իս քիւ կընիկն իմ:

Կէրթան, նըստին հւսվուզը վերեն:

Կըսը. - Մարտի՛կ, տիւ հըմեն էրուն իս, քիւ խւսլւսվքյիր խա՛ն, ըզըյի լիւղկւսցըցիմ:

Զիրիկ կը լիւղկւսցը, կը նըստի խւսլւսվքյերու վերա, կընիկն էլ կը լիւղկւսնա, կը գւս, նըստի ւստւս տեղ:

Մարտու մարտուքին կը գան, կըսը. - Աստըված հանկը, իս, տու տը պառկինքյ նա տեղ:

Կը պառկին իրարու ծուց: Կիլնին, կէրթան, կը նըստին սարի՛մ մեչ:

Կընիկ մեկ օր կիլնը, գյըլուխ կը սանդրը, մազեր կիցկը գյետը մեչ, կը տանը:

Կէրթա, կինի հուրուշ թակավուրը խուղը մեչ: Մազեր կինը թակավուրը հանվուզը մեչ:

Թակավուրը տըղեն կէրթա, կը լվանցվը, մազ կը տեսնա, խիլքյ կը թանը, կըսը. - Յամա՛ն, էս մազի տեր պերե՛քյ ձը խանմար:

Թակավուր կը կանչը. - Վեվ գան, նա մազը տեր իմ լաճու խանմար պիրը, մեկ ուր կըշռանքուվ ոսկը կառնը:

Մարթ չըգյըտը, պառավըմ կը գա, կըսը. - Իս գյըտիմ: Ճին-մաճինա խուղը մեչն ը, պիրել իմ մոտեն չի գա, կուզիս քու տըղեն տանիմ անտեղ, տեսնա: Թը կը սպանի՞ն, կը թըղնի՞ն, չըմ գյըտը:

Կառնը ըզլաճ, կը տընը ծըծուում վե, կէրթա: Անու սարը հանսած, ըզլաճ կը խուրը ավզը մեչ:

Կըսը. - Խա՛նըմ, գյիշիրվան տեղ տաս ձը:

Կըսը. - Կո՛րսը, իմ տըռնից գյընա՛:

Կէրթա, կը նըստը վար ճամբխին, մարթ կը գա, կըսը. - Աստըծու սիրո՛ւն ընը, գյիշիրվա՛մ տե՛ղ տու:

Կառնը, կէրթա: Պառավ չար կիլնը, խըլըսուն տախտ տուս կավլը, աչկ կը մըտնը:

Քանի՛մ օր կընցնը վերեն, կըսը. - Կընի՛կ, տու ափսուս իս, ընցկնա մընակ, քյի ընկյիրըմ լազըմ ը, քյեֆ-ուրախուքին էնիքյ:

Կը խապը, թակավուրը լաճ կը պիրը, կանը անու սիրական:

Մարթ կը գա, գյիշիր կընիկ հիտիվ կանը թախ էն: Մարթ կըսը. - Վըրե՞ հիտիվ կանիս թախ ձը:

Գյիշիր մինչիվ լուս իրիքյ տիր հիտիվ կանը թախ էն: Կըսը. «Պա՛մ կա իմ կընկան»:

Խըլըսուն կիլնը, կը նըստը վըր ճընարը ծառին, կը տեսնա պառավ կէրթա, տըղեն կը խանը ավազից, կը պիրը, հանվուզի վերեն կը նըստին, քյեֆ-ուրախուքին կանին: Ինքյն էլ ծառից թամաշա կանի, մընչիվ հիրիկուն, պառավ ըզթակավուրը տըղեն կը խուրը ավազը մեչ:

Մարթ ծառ վե կը կըսկըծվուրը, կը տեսնա՝ դաւվրեշ մ' էկավ, նըստավ: Ծուցից կութին էխան, իպաց, կընիկ էխան տուս, քյեֆ արին, կընիկ քյնու ուլնիկ իթըլ դաւվրեշը ականջ, ջեբից խընձուրըմ էխան, փըչից վերեն, արաց խորոտ ջահելըմ, ենտեղ քյեֆ արին:

Մարթն էսաց. - Փա՛ռքյ իմ քյենե, Աստըվա՛ծ, չէ՞ իս ընկյիր էլ ունիմ:

Դաւվրեշ էլավ, ըզկընիկ արաց սիան, էթալ կութին, մարթն իճավ տակ, մեկտիղ էկան տուն:

Էսաց. - Պառա՛վ, յոթ խուգու խամար կիրակո՛ւլ հազրը:

Նըստան, էսաց. - Դե՛, դաւվրե՛շ, քու կընիկ, անու սիրող խա՛ն տուս:

Էսաց. - Դե՛, կընի՛կ, քու սիրողն էլ խա՛ն տուս:

Ան էզար, դաւվրեշի կընիկ ու սիրող սպանից, դաւվրեշ էզար, անուրն սպանից, սերսփիցին, նըստան: